IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ Քննչական կոմիտեի՝ ՀՀ քննչական կոմիտեի կողմից վերջինիս և <<ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ>> ՍՊ ընկերության միջև 02.05.2025 թվականին կնքված թիվ ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՕԴ-25/1-1 ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումը անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը բավարարել.

1.1. անվավեր ճանաչել ՀՀ քննչական կոմիտեի կողմից վերջինիս և <<ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ>> ՍՊ ընկերության միջև 02.05.2025 թվականին կնքված թիվ ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՕԴ-25/1-1 ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումը:

2. ՀՀ քննչական կոմիտեից հօգուտ <<ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ>> ՍՊԸ-ի բռնագանձել 30 000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

4. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

6. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Արման Օհանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am